ԱՐՑԱԽԻ ՈՍԿԵՁԵՌԻԿ ՎԱՐՊԵՏՆԵՐԻ ԱՐՈՒԵՍՏԸ

Այս օրերին մարդաշատ է Երեւանի ժողովրդական ստեղծագործութեան թանգարանը, որտեղ բացուել է «Արցախի տեկորատիւ-կիրառական արուեստը» ցուցահանդէսը: Ցուցադրւում են մետաղի գեղարուեստական մշակման իրեր գործեր, կարպետներ, արծաթեայ ու ոսկեայ զարդարանքներ, տարազներ, ասեղնագործութիւններ:

Արծաթագործութեան, ոսկերչութեան և կենցաղային գործածութեան ինքնատիպ ցուցանմոյշներ վկայում են Արցախ-Ուտիքի վարպետների կատարողական հմտութիւնը, վարպետութիւնը: Նրանց պատրաստած արծաթէ գօտիները, դրանց ճարմանդները, տարազի հետ բանեցուող զարդերը (վզնոցներ, ականջօղեր գլխազարդեր), կենցաղային գործածութեան իրերը (դոյլեր, սկուտեղներ, կաթսաներ, աշխատանքային գործիքներ և այլն) յատկանշւում են աւելի զարդանախշային լուծումներով ու ներքաքիւս ագոյցներով, կատարման բազմատեսակ եղանակներով: Ցուցահանդէսում ներկայացուած 19-րդ դարի Սիւ-

նիք-Արցախի տղամարդկանց և կանանց գօտիները, կենցաղային գործածութեան իրերը պատկերացում են տալիս հայոց հինաւուրց այս նահանգի բնակչութեան նախասիրութիւնների ու դարերի խորից եկող աւանդութիւնների մասին:

Հայաստանում, մասնաւորապէս Արցախում, գորգագործութիւնը, կարպետագործութիւնը, գոբելենագործութիւնը տարածուած է նոյն վաղեղական ժամանակներից: Ցուցահանդէսում ներկայացուած գորգերը կարելի է բաժանել չորս տիպի՝ վիշապագորգեր, արծուագորգեր, ծաղկագորգեր և «Գոհար» եմոյշի՝ զուտ երկրաչափական ոճաւորման գորգեր:

Զարդանախշերի հարստութեամբ, գոյներով, գործուածքի բարձր որակով առանձնանում են լեռնային շրջանների գորգերը:

Կարպետներն օգտագործուել են որպէս անկողնակալներ: Ներկայացուած են խուրջիններ, ծածկոցներ, պայուսակներ և այլն:

Մեծ համբաւ ունի այստեղի ասեղնագործութեան դպրոցը:

Ցուցադրութիւնում առանձնակի ուշադրութեան են արժանանում ասեղնագործ ժանեակները, մարգարիտներով ու գոհարներով ընդելուզուած, ոսկեանխշ հիւսածոյ իրերը, արուած Շուշիում:

Առանձին բաժնով ներկայացուած է նաեւ խեցեգործութիւնը: Ազգագրա-

կան և հնագիտական բազմաթիւ նիւթեր վկայում են, որ խեցեգործ վարպետները գիտակցաբար, երբեմն էլ սովորութեան ուժով պահպանել են աւանդական ձեւերն ու պատկերազարդումները: Ցուցադրուած զանազան մեծութեան և տարբեր նպատակների ծառայող անօթները, կարասիները, ջրամանները, կաթսաները, իւղամանները, կուլաները աչքի են ընկնում ձեւերի, ոճերի և թեմատիկայի բազմազանութեամբ, ինքնատիպ լուծումներով: Կաւի վրայ գծանախշելու, փորագրելու միջոցով հայ վարպետները ստեղծել են բարձրարուեստ խեցեղէն: Այժմ էլ դրանք մեծ կիրառում ունեն կենցաղում:

Մեծ հետաքրքրութիւն են ներկայացնում նաեւ կենցաղում օգտագործուող միւս իրերը, սալէ երկանքաղացը, խնոցին, խուրջինները: Թանգարանում կազմակերպուած է Արցախի ճարտարապե-



տական յուշարձանների, բնակավայրերի, բնութեան ու մարդկանց լուսապատկերների ցուցադրում, որը աւելի ամբողջական պատկերացում է տալիս այն միջավայրի մասին, որտեղ ծնունդ է ոսկեձեռիկ վարպետների արուեստը:

Վ. ԳՐԻԳՈՐԵԱՆ